# Ակադեմիան դեմ է գիտության ճակատմամբ կառավարության վարած քաղաքականությանը

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Գիտության ծայրաստիճան ծանր ֆինանսական վիճակը հանգեցրեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արհկոմիտեների հերթական ելույթին: Երեկ կայացավ ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմի նիստ ինստիտուտների եւ գիտական ստորաբաժանումների ղեկավարների, ակադեմիկոսների մասնակցությամբ՝ ընդդեմ գիտության նկատմամբ ՀՀ կառավարության վարած քաղաքականության:

Արհկոմի պահանջը, որ հրապարակեց ՀՀ ԳԱԱ միացյալ արհկոմիտեի նախագահ Կիմա Միքայելյանը, վերաբերում է հիմնականում գիտությունների ակադեմիայի պարտքի վճարմանը: Միայն 2001 թ. ակադեմիան թերստացել է մոտ 260 մլն դրամ առաջին կիսամյակի համար այն պատճառով, որ այդ տարվա փողի հաշվին փակվել է գիտնականների 2000 թ. աշխատավարձի պարտքը: Նման որոշման արդարացված չլինելն ակնհայտ է, նշեց Կիմա Միքայելյանը՝ ընդգծելով, որ ծախսերի մյուս՝ տնտեսական եւ այլ հոդվածներով գիտության ֆինանսավորում չի կատարվում 1999 թվականից:

Ակադեմիայի գիտական ստորաբաժանումների ղեկավարները՝ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Բագրատ Ղարիբջանյանը, արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նիկոլայ Հովհաննիսյանը, մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կոնստանտին Ղարագյոզյանը, էկոլոգո-նոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Արմեն Սաղաթելյանը եւ այլք, գիտության ֆինանսավորման հարցն ավելի լայն առումով առաջադրեցին՝ պե՞տք է, արդյոք, Հայաստանին գիտություն ընդհանրապես:

Նրանց կարծիքով, Հայաստանում տեղի է ունենում գիտության արհեստական սնանկացման գործընթաց: Այսինքն՝ գիտությունը չեն ֆինանսավորում, որպեսզի այն հասցվի անմխիթարական վիճակի, իսկ հետո հայտարարվի, որ այն գոյություն չունի, եւ վերցվի այն ամենը, ինչ հնարավոր է, ինչպես դա արեցին ձեռնարկությունների հետ: Ըստ որում, դրա համար ոչ մեկը պատասխանատվություն չի կրում՝ ո՛չ կրթության եւ գիտության նախարարությունը, ո՛չ խորհրդարանի պատգամավորները, ո՛չ կառավարությունն ընդհանրապես:

Շատերի կարծիքով, հարցը՝ Հայաստանին պե՞տք է գիտություն, թե ոչ, պետք է առաջադրվի Հայաստանի նախագահին, որից, ընդգծեցին գիտնականները, կախված է, թե ինչպիսին պետք է լինի Հայաստանը:

Գիտնականները պատրաստակամություն արտահայտեցին դիմել ծայրահեղ միջոցների՝ դատի տալ Հայաստանի կառավարությանը կամ պահանջել նրա հրաժարականը: Նրանք որոշեցին նաեւ, որ իրենց պահանջները հարկավոր է պաշտպանել միացյալ ջանքերով, քանի որ ցաքուցրիվ բողոքի ակցիաները չեն կարող հասցնել արդյունքի: